

ՀԱՅՈՑ ԳՐԵՐ ԵՎ ՄԵՐ ՓԱՄԱՆԱԿԱՇՐԱՆՆԵՐ

Ս. Ա. Մինասյան

Սույն հոդվածում անդրադարձված է գրի՝ որպես լեզվաբանական իրողության, տեսակներին, նրա բնական արտահայտությանը, հատկապես հնչյունագրության կատարյալ համակարգին՝ իր բնականությանը և հաստատված մի շարք աղյուսակներով: Այն նվիրված է ՄԵՍՐՈՊԶԱՆ գրերի 1600-ականին:

Գիրը (գրույթ)՝ որպես մշակութային ու լեզվաբանական երևույթ, հաղորդակցական գործունեություն ներառ է եկել բանավոր խոսքից հետո: Մարդիկ սկզբից օգտվել են պարզունակ բանականություններից, իսկ վաղնջական շրջանում այդ նպատակով գործածվել են *խմաստավորված* խոսքի տեսակներ: Օրինակ՝ ամերիկյան-հնդկացիական որոշ ցեղերի *վաստյումները*, որը թելի վրա պարզորոշ խնդիրներից որոշակի խմաստավորումով եռինվածք է, կամ լեքսիկոնների *ներկիկություն*, որը պարանի վրա հանգուցավոր թելերի որոշակի գաղափարներով ներկայացված շարվածք է, իսկ բառարանական ու աշխիլյան առանձին ցեղեր ունեն յուրովի *ձևավորված ժողիկներ* և այլն:

Նախնադարում գիրը մեծ մասամբ արտահայտվել է վիճաբանականության ձևով՝ կապված բանական, դիցաբանական, մոգական ու հնագույն գեղանկարչական ըմբռնումների, տեսլականության հետ: Գծագիր-նկարապատկերների միջոցով մարդիկ արտահայտել են բանական առարկաներ, որտեղից, իհարկե, հաղորդական տեսարաններ, ընտանի ու արհեստի կենդանիներ և այլն:

Գիրը (գրույթ)՝ որպես լեզվաբանական տարր, որն է գաղափարի, երևույթի, փոփոխության կամ երևույթի արտահայտված-հնչյունական միավոր արտահայտող գծագիր պատկեր է, պայմանական ձևով, որն ունի իր սեփական համակարգը: Նրա տեսակներն են՝ պատկերագրություն, պատկերագրություն, վանկագրություն և հնչյունագրություն [գծ. 1]:

Պատկերագրությունն առարկայի գծագիր պատկերն է, որը հիմնականում արտահայտում է իր զգացմունքները, միտք՝ առանց նախադասության, արտահայտության հնչյունական-բանական կամ խմաստային որևէ տարրի առանձնացման: Այն օգտագործել են հին ժողովուրդները, Մերձավոր Արևելքի որոշ ժողովուրդներ, հին չինացիներ և ուրիշներ: Այսպիսի լեզվային ձևեր Հայաստանում տարածված են Արագածի լանջերի, Սևանա լճի ափերի լեռնոտ մասերի, Սյունիքի ժայռերի վրա ու այլրերի մոտ: Սրա մի տեսակը կոչվում է *պոփոխ* (ժողովրդական ձևով՝ *իծագիր*): Այն երկար և դեպի հեռու կապված եղջյուրներով այծի նկարներ է՝ պատկերած դիրքերով:

Գաղափարագրությունը մի համակարգ է, որի միավորները (պայմանական նշաններ) իմաստավորում արտահայտում են բառ (բառիմաստ) կամ նրա խմաստակիր որևէ մաս: Գաղափարագրությունից այժմ օգտվում են ճապոնացիները, չինացիները, որոնք մի բանի տարրի համառոտ ձևերը (հիերոգլիֆներ) վերաձևակերպել են, հասցրել են վեց հարյուրի: Դրանց օգտագործումը դարձրել է տարվում է յոթ տարվա ընթացքում: Այդպիսի գիր ունեն նաև չինացիները: Հայկական ու խելական գաղափարագրները որոշ ընդհանրություններ ունեն այս լեզվաների հետ: Հր. Աճառյանը դրանք քննում է *նշանագրեր* վերնագրով [գծ. 2]: Գաղափարագրության սկզբունքով են ստեղծված մաթեմատիկական թվանշանները, քիմիական նշանները և այլն:

Գաղափարագիր-վանկագրի տեսակ է *սնտագրությունը* կամ *բնագրությունը*: Այս տեսակներն ունեն սեպի (բնու, մեխ) ձև: Գրությունն իրացվում է այդ գրանշանների տարբեր նախնականություններով: Գործածել են շումերները, ասորեսոցիները, Մերձավոր Արևելքի (Միջագետքի) և այլ որոշ ժողովուրդներ՝ ուրարտացիները, խեթները, հին պարսիկները: Մնացորդ է եղել Երեմիայի հիմնադրման վերաբերյալ վիճակի արձանագրությունը:

Հնչյունագրությունն այն գրատեսակն է, որի միավորները (պայմանական արտահայտում են հնչյունական-արտասահական տարրեր (հնչայք, վանկ), ըստ այդմ էլ դրսևորվում է իբրև տառային այբուբեն կամ վանկագրություն: Բնորոշ վանկագիր է հնդկացի դանավագրի գրատեսակը: Դրա տարրերը կան նաև ճապոնական այբուբենում: Տարբերակներ առույնով կատարվելովն անխառն գրային համակարգեր չկան: Հնչյունագրություն (տառահնչյունային այբուբեն) սեմական ծագում ունի: Տառային այբուբենները բաղաձայնագրի հետագա տարբեր ձևափոխություններ են: Փյունիկեցիներից գիրն անցել է հույներին, նրանցից էլ՝ հռոմեացիներին (նաև՝ հայերին), իսկ մի այլ ճյուղով՝ պարսկերեն նվազագիծներին: Մի այլ շատավիթով սեմական գիրը յափիանցել է Արևելք, հարավարևելյան Ասիայի խորքերը, իսկ մի ուրիշով՝ արևելյան Աֆրիկա, ապա աշխարհամասի այլ վայրեր:

Ժամանակագրական առումով խոր հնություն ունեն ճգնագրական (մ.թ.ա. IV դարից), շումերական (նույնը), նախահնդկական (գրեթե նույնը), կենտական գրերը (մ.թ.ա. II եզր): Միևնույն ժամանակահատվածում որպես գրանյութ, ծառայել են պապիրոսը, կալն սալիկները, մետաղական փայտյա տախտակները, արմավենու տերևները, մագաղաթը և այլն: Ամուր նստությունը և ուլմի աշուսի և քարի վրա գրվածները: Հայ գրիչներն օգտագործել են նրկաթից, եղևնից, սալ փետուրից պատրաստած ձողիկներ: Մետաղյա գրչածայրը գործածվել է XIX դարից, գնդկավոր գրիչները՝ XX դ. երկրորդ կեսից:

Հնագույն ժամանակներում գիրը եղել է պաշտամունքի (կրոնի) գործիչների մենաշնորհ: Կրոնի տարածմանը համարյա ողնկցել է որոշակի գրային համակարգ, գրություն: Օրինակ՝ բուդդայականությանը սպասարկել է հիմնականում հնդկական գրի այս կամ այն տարանջատությունները՝ հիմնականում հունարենից, մատամբ՝ սեմական տառատեսակները, իսլամին՝ սեմաարաբական գիրը: Զրիստոնեության մուտքից շատ չանցած՝ հայերն ու վրացիներն ունեցան հնչյունագիր:

Մինչ մնարության գրի ստեղծումը Հայաստանում մասնակիորեն օգտվում էին հունական ասորական այբուբեններից: Որոշ հայագետներ այն կարծիքին են, թե նախաքրիստոնեական Հայաստանում եղել է ծալկական մինեսական գիր, այսինքն՝ հայերն ունեցել են սևիական գիր՝ գրականություն, որը սակայն մեզ չի հասել՝ Մ. Չամչյան, Մ. Ավգերյան, Ղ. Ալիշան, Բ. Պատկանյան, Ս. Պալասանյան, Մ. Նալբանդյան, Ն. Աբովյան, Ն. Մառ, Ի. Հարությունյան, Ա. Հ. Օրբելի, Ա. Գ. Աբրահամյան և ուրիշներ (այդ վարկածը դեռևս գիտական համընդհանուր հիմնավորում չունի, նաև սրվում են որոշ օրինակներ): Երբևի՜ էլ դանիելյան նշանագրերի շարքին այդպիսի մտքերի ճորտահանգում: Օրինակ՝ Գ. Սևակը նշել է. «Դանիելյան նշանագրերի օգտագործումը հայկական նոր, ինքնուրույն այբուբեն ստեղծելու գործում որպես առաջին մասնակից որպես գրչության ինքնատիպ ոճ՝ տառապատկերների համակարգ, բնավ չ'նստեցնում Մեսրոպ Մաշտոցի դերն ու ստեղծագործական հաճաքը: Մեսրոպի մեծության արտահայտվեց հենց նրանում, որ դանիելյան գիրն ընդունելով իբրև հայկական գրություն՝ նախադրյալ ու էինք՝ նա կարողացավ վերանշակել այն և կատարելագործել ժամանակաշրջանի ամենաազատոր դարության՝ հունական գրի սկզբունքներով ու տեխնիկայով» [1. 54]: Այժմ Մարգարյանը ևս չափավոր հավելել է. «...չի կտրելի անվերապահորեն ընդունելի ու ճիշդ համարել նաև այն կարծիքները, որոնցով մեծվում է նախամաշտոցյան շրջանում հայ գրի ու գրականության գոյությունը: Բանն այն է, որ կան, այնուամենայնիվ, ինչ-ինչ փաստեր ու վկայություններ, որոնք փոքր շրջանում հայ գրի ու գրականության գոյությունն են ինչ-ինչ չափով հավաստում» [2. 141]: Այնուհետև՝ դանիելյան գրերի վերաբերյալ իր կարծիքներում հավաստում է այդ «ինչ-ինչ փաստերը» [ն. տ., էջ 144]: Ումար էլ հակառակն են պնդում, այսինքն՝ մեսրոպյանից առաջ հայ գիր չենք ունեցել՝ Հ. Տաշյան, Հ. Հյուբյան, Գ. Մանուկյան, Հ. Աճառյան, Մ. Աբելյան, Ստ. Մախապյան, Էդ. Աղայան և ուրիշներ (այս ընդհանրացումը ևս քաղաքական լուծում դնո չի ստացել): Մաշտոցագիտության ու հայոց գրերի վերաբերյալ ամենատեսական ու ամենամաքավուն աշխատանքը կատարված է Հր. Աճառյանի կողմից (այդ գործերն ամփոփված են հիմնադիւն Էրատարյակված «Հայոց գրերը» աշխատությունում: 3), իսկ գրերի վերաբերյալ ենագիտական նյութեր բոլորից ավելի հրատարակել է Ա. Գ. Աբրահամյանը՝ «Հայոց գիր և գրչություն» [4. այս գրքի վերաբերյալ գիտական ամենամաքավոր ընդգնահատությունը Էդ. Աղայանի կողմից էր տրվել: 5]: Վերոնշյալ վիճաբանույց հաջգնող

ծիրձ տնվառված են Հ. Ջ. Պետրոսյանի կողմից «Հայերենագիտական բառարանում» [6, 343-344]։

XXI դ. սկզբին՝ ազգապահպան հայոց գրերի 1600-ամյակի կապակցությամբ կայացած առաջնային գիտաժողովներում նոր տեսանկյուններով են մաշտոցագետներն անդրադարձել հայոց գրերի վիճահարույց հարցերին, բայց, ցավոք, միասնական ընդհանրացում չի կատարվել։

Հստ գրանշանների տառերի ձևավորման՝ տարատեսակներն են զարգացությունն ու ազդեցությունը, իսկ ըստ ուրույն նշանակումների՝ ծածկվածությունը (տառայինի նմուշը տես տեսնին. գծ. 3)։

Հայկական գրի կատարյալ տեսակը մետրոպոլիտեն հնչյունագրությունն է, որոնց քանակը քննարկվեցն էր (մետրոպոլիտեն այբուբեն// մաշտոցյան գիր// մաշտոցյան այբուբեն)։ Հայկական գիրը մետրոպոլիտեն կամ մաշտոցյան է կոչվում սուրբ Մետրոպոլիտեն Մաշտոցի կողմից Եղեմիայում հռոմեացիների և համակարգվելու, Սամսատում (Սամսատ) հեղինակված գրքով (հավանաբար) կողմից որոշ նրբություններ պատշաճվելուց հետո մետրոպոլիտեն կատարելությունը ընդունված ճանաչում գտնվելու պատճառով (հայերենն այլ այբուբենների համեմատությամբ հայտնի է Հր. Աճառյանի կազմած համադրական տախտակում. գծ. 4)։ Մետրոպոլիտեն հայերենը մաշտոցյան այլ աշխատանքներ հովանավորել են Սահակ Պարթև կաթողիկոսը և Մաշտոցի արքան՝ մոտավորապես 405-406 թ.թ. (այդ թվերը մոտավորապես տալիս տարվա համեմատումներով է մաշտոցագիտական տարբեր ուսումնասիրություններում նշվում)։ Մետրոպոլիտեն գրի պայմանական հնչյունագիր նշանը կոչվում է տառ։ Նրանով արտահայտվում է հնչյունը և համակարգվում այբուբենում։ Տառերը այբուբենում ունեն կայուն դասավորություն։ Մետրոպոլիտեն տառ ունի իր ինքնատիպ կառուցվածքը, ծագումը, որի բանաբանաբանական ու կառուցման բացատրությունը (հատկապես գլխագիր ներառագրի վերաբերյալ) տրված է Հր. Աճառյանի կողմից [3, 517-555]։ Ահա տառերի ծագումնաբանական աճառյանական ամփոփումը [3, 555]։

Ա = Հրեն. Ա կամ Իրան.	Ղ = հուն. Λ.
Բ = հուն. Β.	Ճ = սաս.
Դ = հուն. Γ.	Մ = հուն. Μ.
Ե = հուն. Δ.	Յ = պհլ.
Ն = հուն. Ε.	Ն = հուն. Ν կամ սաս.
Զ = հուն. Ζ.	Շ = պհլ.
Է = հուն. Η.	Ո = հուն. Ο.
Ը = հայ. է.	Չ = հայ. Չ կամ սաս.
Թ = հուն. Θ.	Յ (շ).
Ժ = պհլ. Չ	Գ = հուն. Π.
Ի = հուն. Ι.	Ջ = զեդ.
Լ = հայ. Ղ կամ	Խ = սաս.
սաս. Լ.	Ս = հուն. Σ կամ
Խ = պհլ. Խ կամ	Իրան.
սաս.	Վ = սաս. Ղ.
Ս = սաս.	Տ = սաս. Ք.
Կ = հուն. Κ կամ սաս.	Ր = հուն. Ρ.
Կ կամ սաս. Կ.	Ց = հայ. Ս.
Հ = պհլ. Զ.	Ի = հուն. Υ.
Ջ = հայ. Ս կամ	Փ = հուն. Φ.
սաս. ձ.	Ք = հուն. Ψ.

Մետրոպոլիտեն տառերը պարզ մենագիր են (միայն ու-ն է, որ հետագայում, նրկաբարբառից առաջ ծայրավոր դառնալով, տարագիր ձևերում բաղադրյալ՝ նրկգիր տառ մնաց *ու-ն վ/նյուն*. առաջին մեծատառում առաջ միայն Ո բաղադրիչն էր մեծատառ գրվում՝ Ու, իսկ հիմա՝ նրբումն էր բաղադրիչները՝ Ու. այդ ձևով է նաև հայագիտական մի քանի այբուբենագիտական աղբյուրներում [7, 173, 2, 150]. *ու-ն* ձևագիր ձևում տառանջատ չի գրվում, այլ նրկուսն էլ ձուլվել ու միակատույց տառ են դարձել. ձևագրի մեծատառում միայն Ո-ն է մեծատառով գրվում՝ Ու)։ Չի (ու) առանձին տառածև չէ, այլ շաղկապի՝ կրճատ Լ-ի կիրառություն է, որը Մաշտոցի տառերում 36 տառին կցվել է XII դ. հավելված *օ* և *ֆ* տառերը համատեղելու համար ու խորհրդային կարգերում սխալմամբ դիտարկվել է որպես տառ և քանակը հասցվել 40-ի, բայց քանի որ *վ/նյուն*ը

համվել է, ուստի 39 տառ է ճանաչվել: Հիմա *Լ*-ն առանձնացված է, ուստի այդ տրևելահայերենում 38 տառ է գիտակցվում:

Ինչպես նշվեց. Մաշտոցի ստեղծած այբուբենում կա 36 տառ, որից յոթաբնյուրն ունի գծագրական- կառուցվածքային, գործտալան ինքնատիպություն և սներում է այլադիր կա հայագիր նախատիպարներից (զրանց ամփոփ ցուցակը տրվեց վերևում): Հայերեն տառից այբյբենական դասավորությունը հիմնականում նման է հունականին, իսկ նորատառն ու հայկական նախատիպ ունեցողները, ըստ *հայկական մի տեսության* [6, 27] շարակարգվել են նախատիպից հետո: Հր. Աճառյանն այդ տիպի ինը տառի դասավորության պատճառով գծագրական *նմանությունն* է համարում [3, 559]: Տառաունենը տրված են այսպես. Մաշտոցի կողմից՝ հունականի կամ սեմականի նմանությամբ՝ միայն կարենցված հարմարեցված հայահնչմանը: Օրինակ՝ ալֆա-ԱՅԲ, լալբա-ԼԱՍ և այլն [3, 566]: Ա Մաթևոսյանը մնարուպյան տառաունեններից *փուն/իյուն*-ը վերագրել է Ռ-ին՝ արևելյան երեսուհինը տառանոց այբուբենում [7, 173]:

Մնարուպյան տառերն ունեն ինքնատիպ ու ճշգրիտ թվային արժեք և կատարյալ համակարգ են կազմում: Միավորներ են Ա-ից Թ-ն, տասնավորներ՝ Ժ-Ղ, հարյուրավորներ՝ Ժ-Զ (Զ-ից՝ ինը հազարից, բարձրը տասը հազար էր, որը առաջ կոչվում էր բարձր իսկ առավել մեծ թվեր արտահայտելու համար *տաս թվերը* բոլոր անգամ մեծացվում էր պատճառով արայմանական նշանով՝ Բ- քառն հազար, Ժ- հարյուր հազար և այլն):

Մնարուպյան տառերը 16 դար (չնչին փոփոխությամբ) իր ժողովրդին ծառայել *հայագրանքան գրերը* են և պատմական զարգացման ընթացքում ունեցել է հետևյալ գրատեսակները (մի քանի տառի համար՝ գծ. 5. այդ կապակցությամբ հայագիտությունում մեծ վատասել է ներդրել Կարո Ղափաղապյանը):

1. *Գրպագիր* (աղյուսակագիր, ուղղանկյուն երկաթագիր)՝ հին տեսակ է և ունի տարբերակներ (գործել է մինչև XII դ.): Հիմա գործածվում է որպես գլխագիր՝ մեծատառ վերնագրային տառառոնակ: 2. *Երկաթագիր*: Մնարում է գրչագրից, գերիշխող էր V-XIII դդ. և լայն կիրառություն ուներ վիմագրությունում (երկաթն ծաղկելով էր գրվում, որից և առաջվել էր անունը: Ունի իր ենթատեսակները՝ գլխագիր երկաթագիր (կամ բոլորածն՝ բոլորագիծ երկաթագիր կամ թուն մնարուպյան երկաթագիր), միջին երկաթագիր (կամ միջին մնարուպյան երկաթագիր կամ ուղղագիծ երկաթագիր), փոքր երկաթագիր: 3. *Բոլորագիծ երկաթագիր*: Ունի այժմյան մեծատառի ձևը, տառապյունները միացնող գծերը կոր, կամարածն են, գրչանները բարձրությամբ հավասար են: Բառանշատ գրություն չէր, իսկ նոր տողի սկզբնատառը փոքր-ինչ դուրս էր ընկած: 4. *Բոլորագիր* (բոլորագիր, բոլորակ գիր): Սա սեկում է փոքր երկաթագրի ձևավորվել է X-XI դդ., եկտո դարձավ հայ տուգրության գիրը՝ իր կիլիկյան և արևելյան տարատեսակներով: Այսպիսի գրություններում մեծատառն ու փոքրատառը տարբերակված էին, բառանշատ էին գրվում, *օ.թ* տառեր պարունակում էին: 5. *Նտորգիր*: Մնարում է բոլորագրից և արագագրության համար էր: Հաշվի էր ածնվում տեղի խնայողությունը (նոտայի)՝ դպիկների գրագիրների գիրն էր): Հայտնի էր XIII դ-ից, ձեռագրի հիմք է դառնում և XIX դ. փոխվում է շղագրի: 6. *Շղագիր*: Մնարում է բոլորագրից, շեղ էր գրությամբ ու մագագծերով միացված է (X-XI դդ. էր գործածվում. սա լայն կիրառություն ունեցավ XIX դ.): 7. *Գլխագիր* կամ գլխատառ: Մեծատառի ձև ուներ, գործածվում է տեքստի սկզբում և խոչորությամբ առանձնանում է մյուսներից: 8. *Չարդագիր* (դրվագագիր): Գեղարվեստորեն ձևավորված տառառոնակ է Միջնադարում ուներ հետևյալ ենթատեսակները՝ ծաղկագիր, թյունագիր, վիշապագիր, մարդագիր, գազանագիր, կենդանագիր և այլն: Երբ տառը շատ շքեղ էր, կոչվում էր *փառագիր*: 9. *Փակագիր*: Կապրի տեսակ էր, կիրառվում էր վիմագրություններում (հիմնականում անձնատուներին համար էր, և տառերը համակցվում էին հիմնամասերով): 10. *Վարդագիր*: Մատանու և կնիքների վրա փորագրվածն էր: 11. *Դրամագիր*: Ռուբիկյանների դրամների փառ նկածն էր: 12. *Կոնդակագիր*: Կաթողիկոսի պալատական գրություններում գործածվածն է: Պատմական բոլոր տառածները ճանաչելի են: Միայն Ն-ի ձեռագիր մեծատառի վերին ոլորվածքը, մինչև XX դ. կնքը, երբեմն գրվում էր տառերի առաջին տեղադրության չափավոր անմանվում ժառանգական փոքրատառ *ն-ին*՝ *ե*:

Հայերեն տառերը տողի տեղադրությամբ չորսն են.

տառի վրա քիչ բարձրությամբ տեղադրված հիմնամասերով (տառաբնեցով)։
տառերն են՝ ա, ս, ա, ու և այլն։

II- Տողի վրա նախորդի կրկնակի բարձրությամբ փոքրատառերն ու մեծատառերն են՝ Ա, Ս, Բ, Մ, Ը, Զ և այլն։

III- Առաջինի չափով՝ տողից վեր և տողից ներքև հիմնամասերով տեղադրված տառերն ու մի քանի ձևազարդ մեծատառերն են՝ Բ, Գ, Զ, Ը, Թ, Կ, Լ, Դ, Զ, Ը, Լ, Լ և այլն։

IV- Երկրորդի չափով տողից վեր ու երրորդի չափով տողից ներքև հիմնամասերից բաղադրված մեծատառերն ու փոքրատառերն են՝ Կ, Վ, Կ, Վ, Վ, Բ, Գ, Զ, Ը, Թ, Կ, Լ, Դ, Զ, Ը, Լ, Լ։

Արդյունքում յուրաքանչյուր հնչյունի համար աշակերտներին ուսուցանվում է տառերի չորս տեսակը (ձևազարդ)՝ մեծատառ ու փոքրատառ՝ գրելու համար, տպագիր՝ մեծատառ ու փոքրատառ՝ լուսատվության համար)։ XX դ. տպագրական տառատեսակները բազմազան էին ու արդեն մեծ թիվ ունեցող, իսկ գծագրական- գեղարվեստական տառարվեստը հարյուր քսանից ավելին է [8]։ Այսպես գրողի վերաբերյալ նշել է ու կա վսեմ վերաբերմունք, որը ներքին պաշտամունքի մասն է։ Դրա վերջին արտահայտություններից մեկն էլ XXI դ. սկզբին (2005 թ.) կերտված քարե խեղճի ՊՈՒՐԱԿԱՆ է (ճարտարապետ՝ Ֆ. Աֆրիկյան, Աշտարակ-Ապարան ճանապարհի մոտ)։ Առաջին լանջին, իսկ ԱրհՆ-ում՝ դաշիժի մուտքի մոտի պատին փակցված ընկուզենու արմատայինների վրա Այբուբենով, Մաշտոցի դիմափայլաբանական և աստվածանիշ Է-տառային է (հեղինակ՝ Մ. Դադայան, 2005 թ.)։ Հայկական տասնվեցորդյա տառերը՝ այբուբենը ու հայապահպան այդ գինվորները (ՀԾ) իրենց հրաշք արարչի հետ պաշտով ու սիրով պաշտվում են հայ ժողովրդի կողմից (Մ. Մաշտոցը հանրահայտ չորս դիմանկար է ներկայացրել՝ Հովի. Երուսաղեմցի, Ստ. Ներսիսյան, Հր. Ռոմիլյան, Գր. Խանջյան, տառերի շարքը տե՛ս գծ. 6)։ Մեծ արվեստագետ Հովի. Երուսաղեմցի Մ. Մաշտոցին ՀԱՅՈՑ ԱՍՏՎԱԾ անունով տառերի արարումը՝ ՀԱՅՈՑ ՀՐԱԾԲ (այդ բառակապակցությունը Մաշտոցի վերաբերյալ գրվել է նաև Լեոն «Առաջին ուսուցիչը» պատմվածքում)։ Լեոն ունի նաև հետևյալ տառերի արարումը՝ «Մեսրոպն իր կատարած գործով ամենամեծն է մեր պատմական հերոսներից»։ Արցախյան սրտաբեկությամբ կիրտված բնորոշում է՝ առաջին մեծ ու հանճարն ունեցող շրջապատում, որը հրապարակայնորեն օգտագործել են Հր. Բեկլարյանն ու Հ. Երուսաղեմը [9. ընդհանրապես առաջին կամ հայերենի առաջին ուսուցիչը Մեսրոպ Մաշտոցը չի գտնվում, այդպիսի՝ պատմական անուն դեռևս չի վերածնվել. ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԸ ԵՐՈՍԱԼԻՄ ՏԱՌԵՐՈՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՍՈՒՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆ Է՝ Մ. Մ.]։ Հայոց այբուբենի առաջին ավարտակիրն հակիրճ ու ամբողջական բանաստեղծության հեղինակ Գևորգ Էմինը արժանապարհ է. «Հայաստանի ու հայ ժողովրդի իսկական Լուսավորիչը ոչ թե Գրիգորն է եղել, ինչքան Մ. Մաշտոցը»։ Հայոց գրերի դիմացկունությունն ու արժեքը ամենամեծ բառերով քանդակել է Էդ. Աղայանը. «Դարերի ավերիչ շունչը չկարողացավ նոցել Երուսի ստեղծած գիրը. իրար հաջորդող աշխարհագունք արհավիրքները՝ նվաճումները, արածի, սովը, գերությանը, գաղթն ու համաճարակները չկարողացան մարել Մեսրոպի վառած նվաճողների գործերն ու ասիմիլյատորների բոլոր բռնություններն անգոր գտնվեցին Երուսի ամենամեծ արժանախաղ գործության աջակց»։ Հայոց գրերին ու Մ. Մաշտոցին նվիրված ու չափածո գործերը երկու տասնյակից ավելին են, որոնց թուղն ու պատկը Պ. Սևակի «Եվ այդ Մաշտոց անուն» պոեմը, Հ. Երուսի «Հայոց հրաշքը», Գ. Էմինի «Այբուբեն չէ սա, Բերդ է Երուսից» պոեմանման բանաստեղծություններն են։ Արցախում ստեղծված չափածո գործերն են՝ Գ. Գաբրիելյան, «Այբուբենը նրգների մեջ», Վ. Հակոբյան, «Մ. Մաշտոցն արարած», Ս. Խանյան, «Օշականում», «Հայոց գրեր», Խ. Բաղդասարյան, «Իմ ժողովրդի գիրն արարած», Վ. Խանյան Հակոբյան, «Այբուբենը հնչում է» և այլն։ Մեսրոպ Մաշտոցն արժանանում էր կերտված են կեցության առիթնող խորհուրդ ստացած ծոցածին արարություններ՝ ճկուն հայերենի լեզվական պերճաշուք իրողությունները։ Օրինակ՝ «Երուսաղեմ, մաշտոցագիտություն, մաշտոցվել (Հ. Երուսի Դու (խաղաղություն) իմ հույսի արարածն է, իմ մաշտոցված խաղաղություն...), մեսրոպագուն (Վ. Դավթյան՝ ...Ապրեց մեր Երուս, Ոսկեղենիկը մեր մեսրոպագուն...), մեսրոպալում, մեսրոպալում, մեսրոպալում (Ս. Խանյան)։ Ու շքերթը ձգվեց մեսրոպալումն մանկանց, Մեսրոպալումն օջախ, սեր ու հարգանք... Երուս գրեր... Դու կանթեղված պիտի շողար, Մեսրոպալումն մեր գալիքում...), մեսրոպալում (Պ. Երուսյան՝ Դու հնատառ, Մեսրոպալում, Աղբյուրի պն Ձինջ ու պայծառ...):

Transf. 1/10/1910. Q. 11

[illegible]

ԱՅԲՈՒՔԵՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

[illegible]

Qd. 4



Qd. 5



Պատ. 6

Գրականություն

- Գալստիան Սևակ, Մեսրոպ Մաշտոց (հայկական գրչի ու մատենագրության սկզբնավորումը), Եր., 1962:
 Մարգարյան Ա., Ժամանակակից Խոյսց լեզու, Եր., 1997:
 Աճառյան Հր., Հայոց գրչի, Եր., 1984:
 Արթուրյան Ա. Գ., Հայոց գիր և գրչություն, Եր., 1973:
 Աղայան Էդ., Նախապատմության հայ գրի ու գրականության. մեթոդական աշխատանքի և հարակից հարցերի մասին, Եր., 1977:
 Պետրոսյան Հ. Ջ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
 ՎԱՀ, հ. 6. Եր., 1980:
 Արիկյան Զ., Տառարվեստ, Եր., 1984:
 Գրիգորյան Հ., Բնագրական Հր., Մաշտոցի լեզուն Աղայանում, Եղիցի լույս, Ստ., թ. 5, 2004:

Резюме

В статье изучаются разные виды и подвиды армянской домостроповской и строчковской письменности.